«Ջավախքին աջակցություն» հիմնադրամ (ՋԱՀ) Տարեկան հաշվետվություն 2014

Վրաստանի Սամցխե-Ջավախք նահանգի և Ծալկայի շրջանի հայության տնտեսական, կրթամշակութային, երիտասարդական կյանքի բարելավման նպատակով ծնունդով Ջավախքից մի շարք գործարարներ և մտավորականներ՝ ՀՀ պաշտպանության նախարարի գլխավոր խորհրդական, գեներալ-գնդապետ **Գուրգեն Դալիբալթայանը,** Վիրահայոց թեմի առաջնորդ **Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը,** «Հայք Ավիա» ավիաընկերության նախագահ Սեյրան Վանցյանը, ՀՀ ժողովրդական արտիստ, կինոռեժիսոր **Հարություն Խաչատրյանը,**

Fund "Support to Javakhk" Annual report 2014

With the aim of improving the economic, cultural-educational, youth life among the Armenians in Samtskhe-Javakhk province and Tsalka region in Georgia, a group of entrepreneurs and intellectuals from Javakhk – **Gurgen Dalibaltayan**, chief adviser to the RA's minister of defence, general-colonel, **Bishop Vasken Mirzakhanyan** – primate of the Diocese of Georgia, **Seyran Vantsyan**, aviator, president of "Hayk Avia" airline company, **Harutyun Khachatryan**, RA national artist, film director, **Karine Khodikyan**, playwright, prose writer, publicist, **Ashot**

դրամատուրգ, արձակագիր, հրապարակախոս **Կարինե Խոդիկյանը**, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս **Աշոտ Մելքոնյանը** և ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, «Կարին» ավանդական երգի-պարի համույթի հիմնադիր-ղեկավար **Գագիկ Գինոսյանը**, 2014 թ. հունվարին Երևանում հիմնադրել են «Ջավախքին աջակցություն» հիմնադրամը (ՋԱՀ):

Կանոնադրության համաձայն՝ Հիմնադրամում ձևավորվել են Հոգաբարձուների խորհուրդ և Գործադիր վարչություն:

ՋԱՀ-ի տեսլականն է՝

Կյանքի բարձր որակ ունեցող, ազգային ինքնության հաստատուն հիմքերով, համախմբված և հայաշատ Ջավախք:

Melkonyan, academician, director of The Institute of History of NAS RA, **Gagik Ginosyan**, RA honoured cultural worker, founder and director of “Karin” folk-dance group, founded the Fund “Support to Javakhk” in Yerevan in January of 2013.

According to the Charter, Board of trustees and Executive department have been formed.

The vision of the Fund

Javakhk with the high quality of life, with the strong bases of national identity, united and with a large number of Armenians.

ՋԱՀ-ի առաքելությունն է՝

«Ջավախքին աջակցություն» հիմնադրամը նպաստում է Վրաստանի Սամցխե-Ջավախք նահանգի և Ծալկայի շրջանի հայության հասարակական կյանքի տարբեր ոլորտների զարգացմանը, ջավախահայության համախմբմանը և հայ-վրացական համագործակցությանը:

Ռազմավարական ուղղություններ	**Մարտավարական ուղղություններ**
1. Վրաստանի Սամցխե-Ջավախք նահանգի և Ծալկայի շրջանի հայության հասարակական կյանքի տարբեր ոլորտների զարգացում	Զարգացման ծրագրերի մշակում և իրականացում հետևյալ ոլորտներում՝
	· Սոցիալական
	· Տնտեսական
	· Առողջապահական
	· Գիտական, կրթամշակութային և տեղեկատվական տեխնոլոգիաների
	· Սպորտի, երիտասարդության
	· Իրավական, տեղեկատվական

2. Ջավախահայության համախմբմանն ուղղված գործունեություն	· Գաղափարաքարոզչական քայլեր՝ համաժողովներ, հավաքներ (համայնքային, տեղային, համընդհանուր), դրամահավաքներ, անհատական հանդիպումներ
3. Հայ-վրացական համագործակցությանն ուղղված գործունեություն	· Հայաստանյան և վրաստանյան իշխանությունների, գործարար և հասարակական հատվածների ներկայացուցիչների հետ պարբերական հանդիպումներ
	· Հայ-վրացական համատեղ պարբերական միջոցառումների կազմակերպում կամ մասնակցություն

ՋԱՀ-ը հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է ջավախահայությանը մտահոգող մի շարք ոլորտներ ընդգրկող լոկալ և խոշորամասշտաբային հետևյալ ծրագրերը (ներկայացվում է ըստ ժամանակագրության).

The mission of the Fund

To Foster the development of various spheres of the social life among the Armenians in Samtskhe-Javakhk province and Tsalka region in Georgia, the solidarity among the Javakhk Armenians and the Armenian-Georgian cooperation.

Strategic directions	Tactical directions
1. Development of various spheres of the social life among the Armenians in Samtskhe-Javakhk province and Tsalka region in Georgia	Processing and implementation of development projects in the following sectors:
	· Social
	· Economic
	· Healthcare
	· Scientific, educational – cultural and Information Technology (IT)
	· Sport, youth
	· Legal, information

2. Activity, directed to the solidarity among the Javakhk Armenians	· Ideological-propagating steps – conferences, meetings (municipal, local, universal), fundraisings, private meetings
3. Activity, directed to the Armenian-Georgian cooperation	· Periodic meetings with the representatives of the Armenian and Georgian authorities, business and public circles
	· Organization or participation at the Armenian-Georgian periodic joint events

During the period under review, the Fund has implemented a number of local and large-scale projects, concerning problems of the Javakhk Armenians in various spheres (they are presented chronologically):

Ա. Հոգևոր-մշակութային ոլորտ, երիտասարդություն

A. Spiritual-cultural sphere, youth

Ապրիլի 18-ին Երևանի Պատմության թանգարանում ՀՀ սփյուռքի նախարարության և «Ջավախքին աջակցություն» հիմնադրամի նախաձեռնությամբ կայացավ ջավախահայ նկարիչների աշխատանքների ցուցահանդեսի բացման արարողությունը, որին ներկա էին մշակույթի գործիչներ, պետական, հասարակական կազմակերպությունների ղեկավարներ, հյուրեր: Ծրագրի արդյունքում ջավախահայ շուրջ 5 նկարիչ-ստեղծագործողներ հնարավորություն ստացան ՀՀ-ում ներկայացնել իրենց աշխատանքները, իսկ երևանաբնակ հանդիսատեսը ծանոթացավ ջավախահայոց մշակույթի հետ:

On April 18, at the Yerevan History Museum, on the initiative of the RA ministry of Diaspora and the Fund “Support to Javakhk”, the exhibition of the works created by the Armenian artists and sculptors from Javakhk was opened. A number of cultural figures, heads of state, public organizations and other guests were part of the ceremony. As a result of the project, 5 artist-creators were given the opportunity to show their works in RA, while the residents of Yerevan took the chance to get acquainted with the culture of Javakhk.

Ապրիլի 21-ին Սբ. Զատկի տոնակատարություններին զուգահեռ Ախալցխայի Նորշեն-Ծղալթբիլա գյուղում հարակից գյուղերի մասնակցությամբ կազմակերպվեց ըմբշամարտի առաջնություն: ՋԱՀ-ի նախաձեռնությամբ այս առթիվ գյուղ ժամանեց Հայաստանի հանրային հեռուստատեսության նկարահանող խումբը, որը նշյալ տոնակատարությունների, նորշենցիների նիստուկացի, գյուղի առօրյայի և առկա խնդիրների մասին պատրաստեց ծավալուն ռեպորտաժ:

On April 21, with the participation of the surrounding villages, in the village of Norshen-Tsghaltbila along with the celebration of Easter the Wrestling championship was held. In this regard, on the initiative of the Fund, the crew from Armenian Public Television arrived at the village and prepared a detailed reporting on the above mentioned holidays, the villagers' mode of life, routine and everyday problems.

Ապրիլի 22-ին Զավախքի Դամալա գյուղում, իսկ ապրիլի 23-ին՝ Նինոծմինդա քաղաքում տեղի են ունեցել Մեծ Եղեռնին նվիրված հուշաքարերի բաց-

On April 22, in the village of Damala and on April 23, in the town of Ninotsminda, cross-stones dedicated to the Armenian Genocide were opened. The delegation of the Fund

ման արարողությունները, որոնց մասնակցել է Հիմնադրամի պատվիրակությունը: ՋԱՀ-ը աջակցել է նշյալ միջոցառումների լուսաբանմանը հանրային լրատվամիջոցներով: Հուշաքարի բացմանը ներկա էին հյուրեր ՀՀ-ից, Ռուսաստանից և Վրաստանի տարբեր հայաշատ վայրերից:

"Support to Javakhk" participated at the opening ceremonies. The Fund has assisted in elucidating the mentioned events through the public media. Guests from various Armenian populated areas in RA, Russia and Georgia attended the opening ceremonies of the cross-stones.

Մայիսի 7-ին Հիմնադրամի աջակցությամբ Երևանի թիվ 181 դպրոցում տեղի է ունեցել «Հայ անպարագիծ ոգին... Ջավախքից Արցախ» խորագրով ներկայացում–միջոցառում՝ նվիրված գեներալ-գնդապետ, ՀՀ ՊՆ գլխավոր խորհրդական Գուրգեն Դալիբալթայանին և մայիսյան հաղթանակներին: Միջոցառման արդյունքում դպրոցի շուրջ 150 աշակերտ, ուսուցչական կոլեկտիվը, ծնողական կազմն ու հյուրերը ծանոթացան արցախյան ազատա-

On May 7, at Yerevan school N 181, with the assistance of the Fund, the performance-event on the subject “The boundless spirit of the Armenians... from Javakhk to Artsakh” was held, dedicated to the chief adviser to the RA’s minister of defence, general-colonel Gurgen Dalibaltayan and May victories. As a result of the event, about 150 pupils, the teaching staff, the parents and the guests got acquainted with the material and human support of Javakhk Armenians in the years of the Artsakh war.

մարտին ջավախահայության բերած նյութական և մարդկային աջակցությանը:

Հիմնադրամը նախաձեռնել է նաև գեներալ-գնդապետ Գուրգեն Դալիբալթայանի ծննդյան 88-ամյակին նվիրված երեկոն:

The Fund has also initiated the event, dedicated to the 88th anniversary of general-colonel Gurgen Dalibaltayan.

2014 թ. հունիսի 16-ից սկսած ամեն հինգշաբթի, ժամը 16.20 (կրկնությունը՝ ուրբաթ, ժամը 12.20) Լրատվական ռադիոյի եթերում (FM 106.5) հեռարձակվում է «Երկիր Զաբախա» հաղորդումը (յուրաքանչյուր հաղորդ-

Since June 16, 2014, every Thursday, at 16.20 p.m. (repetition of the programme on Friday, at 12.20 p.m.) the circle of programme “Zabakha country” (duration of each programme half an hour) has been broadcasting on the radio station “Information

ման տևողությունը՝ 0,5 ժամ), որի յուրաքանչյուր հաղորդում նվիրված է Ջավախքի մեծերից մեկի կյանքի և գործունեության լուսաբանմանը: Ծրագրի արդյունքում բազմահազար մարդիկ ռադիոյի և համացանցի միջոցով բացահայտում են ջավախահայ մի շարք մեծերի, ծանոթանում են նրանց կյանքին և գործունեությանը, զուգահեռաբար նաև՝ Ջավախքի անցյալին ու ներկա խնդիրներին:

Radio" (FM 106.5). Each programme is devoted to the interpretation of the life and work of eminent Armenians from Javakhk. As a result of the project, through the radio and the Internet thousands of people discovered a number of prominent Armenians from Javakhk, got acquainted with their life and work, as well as the past of Javakhk and the modern day problems.

Հուլիսի 20-ին Հիմնադրամի աջակցությամբ Նինոծմինդայի Գանձա գյուղում կազմակերպվեց «ՏԵՐՅԱՆԱԿԱՆ ՕՐ» ավանդական տոնահանդեսը: Արդյունքում՝ միջոցառման մասնակիցները և հանրության լայն շրջաններն իրազեկվեցին

On July 20, with the assistance of the Fund "Support to Javakhk" in the village of Gandza a traditional festival "Days devoted to Teryan" was organized. As a result, the participants of the festival and the broad section of society became fully informed about the Fund, as well as endured that very

հիմնադրամի մասին, միաժամանակ Տերյանի ծննդավայրում նորովի վերապրեցին այն միջավայրը, որը ծնունդ է տվել մեծն պոետին:

atmosphere, giving birth to the distinguished poet.

Օգոստոսի 12-17-ը Նինոծմինդայի Գանձա գյուղում կազմակերպվել է «Վերադարձ» խորագրով ամառային ճամբար-ծրագիրը, որին մասնակցել են 8-12 տարեկան 40 երեխա՝ Գանձայից և Ծալկայի շրջանից: Արդյունքում ծրագիրը նպաստել է մասնակից երեխաների ազգային, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական դաստիարակությանը, նրանց մոտ ազգային և համամարդկային արժեքների ձևավորմանը, Տերյանի կյանքի և պոեզիայի մասին երեխաների շրջանում առավել խոր գիտելիքների ամրապնդմանը:

On October 12-17, in Gandza village of Ninotsminda region “Veradardz” (“Return”) summer camp-project was organized with the participation of 40 children at the age of 8-12 from the village of Gandza and the region of Ninotsminda. As a result, the project fostered the participants’ national, moral, aesthetic and physical upbringing, formation of national and universal values, fortification of profound knowledge about Teryan’s life and poetry in the circle of children.

Հիմնադրամն աջակցել է 2014թ. օգոստոսի 18-24-ը Ծաղկաձորում կազմակերպված «ԲԱԶԵ-2014» համահայկական երիտասարդական հավաքի Ջավախքի ջոկատին: Արդյունքում հավաքի ջավախքյան 9 երիտասարդներ հնարավորություն են ստացել իրենց ինտելեկտուալ և ֆիզիկական ուժը ներկայացնել Հայաստանի և սփյուռքի այլ երիտասարդների շրջանում, կապեր հաստատել վերջիններիս հետ:

On August 18-24, 2014 the Fund «Support to Javakhk» supported the squad from Javakhk which participated in All-Armenian youth assembly «BAZE-2014». As a result, 9 representatives of the Javakhk squad were given the opportunity to show their physical and intellectual abilities among the other youth squads from Armenia as well as the Diaspora, thus exchanging contacts with the latter.

2014 թ. սեպտեմբերին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը «Ջավախքին աջակցություն» հիմնադրամի նյութական օժանդակությամբ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանի խմբագրմամբ հրատարակել է պ.գ.դ., պրոֆեսոր Կլիմենտ Հարությունյանի հեղինակած «ՋԱՎԱԽՔԱՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ 1941-1945 թթ.» արժեքավոր գիրքը, որտեղ ՌԴ պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվի նյութերի, համապատասխան գրականության և մամուլի հիման վրա առաջին անգամ հայ պատմագիտության մեջ լուսաբանվում է Ջավախքի (հիմնականում՝ Ախալքալաքի շրջանի) հայության 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի մասնակցության

In September, 2014 the Institute of History NAS RA with the financial support of the Fund «Support to Javakhk», published a valuable book by Doctor of Historical Sciences, Professor Kliment Harutyunyan, «Armenians from Javakhk in the Great Patriotic War», edited by the director of the Institute of History NAS RA, academician Ashot Melkonyan. In the book for the first time in the Armenian historiography, based on the records found in the Central Archives of the Russian Federation Department of Defense and corresponding literature and press, it was mentioned about the Armenians from Javakhk (especially from Akhalkalaki region) participating in the Great Patriotic War of 1941-1945. A

հիմնահարցը: Հատկապես մեծ ուշադրություն է դարձվել պատերազմում Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացած, Փառքի շքանշանի երեք աստիճաններով պարգևատրված և գեներալի ու ծովակալի կոչման արժանացած ջավախքահայերի կատարած սխրանքների, ինչպես նաև թիկունքի աշխատավորների հերոսական աշխատանքի վերհանմանը: Արդյունքում՝ հայ ընթերցողը ևս մեկ անգամ հնարավորություն ունեցավ ծանոթանալ Հայրենական մեծ պատերազմին ջավախահայության հերոսական մասնակցությանը:

special consideration was given to brave Armenians from Javakhk, who were awarded the titles of Hero of the Soviet Union, the titles of General and Admiral rewarded by Orders of Glory 3rd class, and heroic workers in the rear. As a result, the reader was given once more the opportunity to learn about the heroic involvement of Javakhk Armenians in the Great Patriotic War.

2014թ. սեպտեմբերի 6-ին Ջավախքի Նինոծմինդա քաղաքում տեղի ունեցավ ՀՕՄ-ի նախաձեռնությամբ հիմնադրված Երիտասարդական-մշակութային կենտրոնի բացումը, որին իր մասնակցությունն ունեցավ նաև ՋԱՀ-ը՝ կենտրոնին նվիրաբերելով բարձրախոս:

On September 6, 2014 in the town of Ninotsminda in Javakhk the opening of Youth Cultural Center, founded on the initiative of Armenian Relief Society, was held. The Fund «Support to Javakhk» also participated at the opening ceremony and donated speakers to the Center.

2014թ.դեկտեմբերին«Ջավախքին աջակցություն» հիմնադրամը հրատարակել է ուսուցիչ, հայ մամուլի երկարամյա թղթակից, քահանա, հայ հասարակական-մտավորական շրջանների անվանի ներկայացուցիչ, բանաստեղծ Վահան Տերյանի

In December, 2014 the Fund «Support to Javakhk» published a book about the life and career of a teacher, an experienced correspondent of the Armenian press, a priest, a distinguished representative of public and intellectual circles, famous Armenian poet Vahan

ավագ եղբայր Ջավախեցու (Ղազարոս Տեր-Գրիգորյան - 1874–1937 թթ.) անցած կյանքը և ստեղծագործական ուղին ներկայացնող գրքույկ: Ընթերցողին անվանի մտավորականի գրական ժառանգությանն առավել մոտիկից ծանոթացնելու նպատակով հավելվածում զետեղված են նրա՝ Ջավախքի գյուղաշխարհն արտացոլող «Ընկնավորը», «Դատաստան կա», «Վերն Աստված կա» պատմվածքները և «Հուշեր Վահան Տերյանի կյանքից» հուշագրությունը: Արդյունքում հայ ընթերցողին առաջին անգամ համապարփակ կերպով ներկայացվեց տերյանական գերդաստանի ևս մեկ ներկայացուցչի անցած կյանքը և ազգանպաստ գործունեությունը:

Teryan's eldest brother, Javakhetsi (Ghazaros Ter-Grigoryan (1874–1937)). With the aim of acquainting the reader more closely with the literary heritage of the prominent representative of intellectuals, in the edition were included «The Possessed», «There is Judgment», «There is God above» narratives, which show the village-life in Javakhk and «Memoirs from Vahan Teryan's life». As a result, for the first time, the life and career of another representative of the Teryans' family was comprehensively presented to the Armenian reader.

«Ջավախքին աջակցություն» հիմնադրամը, գիտակցելով Ջավախքի մշակութային կյանքի զարգացման գործում հայ մեծերի կյանքի և գործունեության վերարժևորման կարևորությունը, ինչպես նաև ջավախահայության ծոցից ծնված այդ տաղանդաշատ մարդկանց հոգևոր ժառանգությունը հարազատ վայրերում ի ցույց դնելու անհրաժեշտությունը, ձեռնամուխ եղավ աշուղ Ջիվանու հայրենի Կարծախ գյուղում մեծանուն աշուղի տուն-թանգարանի ստեղծմանը: Դեկտեմբերի 16-ին «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոնում կայացավ աշուղ Ջիվանու հայրենի Կարծախ գյուղում մեծանուն աշուղի տուն-թանգարանի ստեղծման առաջին նիստը, որին ներկա էին մի շարք մտավորականներ՝ մշակութային գործիչներ,

The Fund “Support to Javakhk”, recognizing the importance of re-appreciation of life and work of Armenian prominent personalities in the development of cultural life in Javakhk as well as the necessity to demonstrate the spiritual heritage of these talented people in their native lands, took the responsibility of creation of a house-museum of great minstrel (ashugh) Jivani in his native village of Kartsakh. On December 16, in Elite Plaza Business Center took place the first meeting concerning the creation of a house-museum of great minstrel (ashugh) Jivani in his native village of Kartsakh, where many intellectuals were present: cultural figures, composers, historians as well as RA National Assembly deputies and entrepreneurs. As a result, the creation of another such center will give

կոմպոզիտորներ, պատմաբաններ, ինչպես նաև ՀՀ Աժ պատգամավորներ և գործարարներ: Արդյունքում՝ ինչպես ջավախահայությունը, այնպես էլ ողջ հայությունը կունենա ևս մեկ կենտրոն, որը հնարավորություն կտա մոտիկից և շոշափելիորեն ծանոթանալ մեծանուն աշուղի կյանքին ու գործունեությանը, վերջինիս թողած հոգևոր ժառանգությանը:

the opportunity to all Armenians around the world to learn about the life and creative and spiritual heritage of an eminent Armenian minstrel.

Բ. Սոցիալ-տնտեսական, ներդրումային ոլորտ

Հիմնադրամի սոցիալական ծրագրերից ամենաընդգրկունը «Աջակցություն Ջավախքի բազմազավակ ընտանիքներին» ծրագիրն է, որի միջոցով Սամցխե-Ջավախք նահանգում և Ծալկայի շրջանում միանվագ դրամական պարգև է հատկացվում 2014 թ. հունվարի 1-ից հետո ընտանիքներում ծնվող յուրաքանչյուր 3-րդ և ավելի երեխաներին (յուրաքանչյուր ընտանիքի 3-րդ երեխայի համար հատկացվում է 1000 լարի, 4-րդի համար՝ 1500 լարի, 5-րդ ու հաջորդ յուրաքանչյուր երեխայի համար՝ 2000 լարի), ինչպես նաև 2014 թ. հունվարի 1-ի դրությամբ

B. Social-economic, investment sphere

The project “Assistance to the families of Javakhk with many children” is the most large-scale project among the other social projects of the Fund. Within the framework of the project, families of Samtskhe-Javakhk province and Tsalka region are provided with one-shot monetary award for the 3rd and more children, born after January 1, 2014 (more precisely, 1000 GEL, 1500 GEL and 2000 GEL to the 3rd, 4th and subsequent child). Families, having 6 and

անչափահաս տարիքի 6 և ավելի երեխա ունեցող յուրաքանչյուր ընտանիքի տրամադրվում է 2000 լարի:

2014 թ. ապրիլի 21–ին Ջավախքում տեղի է ունեցել «Աջակցություն բազմազավակ ընտանիքներին» ծրագրի մեկնարկը, որի առիթով Հիմնադրամի ներկայացուցիչներն այցելել են ՋԱՀ-ի շահառուների ընտանիքներ, հանձնել համապատասխան պարգևավճարները:

Հաշվետու տարվա ընթացքում «Աջակցություն Ջավախքի բազմազավակ ընտանիքներին» ծրագրին դիմել են Ջավախքում բնակվող 159 ընտանիք, այդ թվում Ախալքալաքի շրջան՝ 78 ընտանիք, Նինոծմինդայի շրջան՝ 47 ընտանիք, Ախալցխայի շրջան՝

more under-age children by January 1, 2014, are provided with 2000 Gel as well.

The commencement of the project was on April 21, 2014, on the occasion of which the representatives of the Fund visited the beneficiaries' families, handing the corresponding monetary awards.

During the period under review, 159 beneficiary families from Javakhk have applied for the project "Assistance to the families of Javakhk with many children", among them Akhalkalaki region – 78 families, Ninotsminda region - 47 families, Akhaltsikhe region – 16 families, Tsalka region – 8 families, Aspindza region – 8,

16 ընտանիք, Ծալկայի շրջան՝ 8 ընտանիք, Ասպինձայի շրջան՝ 8, Բորժոմի շրջան՝ 2 ընտանիք:

2014 թ. ՋԱՀ-ը նշյալ ծրագրով պարգևավճար է տրամադրել 159 ընտանիքների:

Ծրագրի իրականացումից ստացվող ակնկալիքները բաժանվում են երկու մասի.

1. Երկարաժամկետ հատվածում ակնկալվում է ջավախահայության շրջանում ծնելիության աճ և դրանով իսկ ժողովրդագրության բնագավառում զարգացման դրական տենդենցներ,

Borjomi region – 2 families.

In 2014, in the framework of the above mentioned project, the Fund “Support to Javakhk” has provided 159 families with monetary award.

Expectations about the implementation of the project are divided into two parts:

1. In a long-term sense, growth of birth rate, thus positive tendencies in the development of the demographic picture among the Javakhk Armenians are expected,

2. Կարճաժամկետ հատվածում ակնկալվում է ջավախահայության շրջանում Հայաստանի Հանրապետությունից ստացվող բարոյական ազդակների ուժեղացում:

2. In a short-term sense, the strengthening of moral impulses from the Republic of Armenia among the Javakhk Armenians is expected.

Օգոստոսի 6-ին հիմնադրամի աջակցությամբ տեղի է ունեցել Թափարվան գետի վրայով քաղաք Ախալքալաքը Խուլգումո և հարակից գյուղերին միացնող հետիոտնի համար նախատեսված կամրջի բացման արարողությունը, այդ առթիվ շնորհակալագիր է հանձնվել նաև նախաձեռնության հեղինակ ու բարերար Թումաս Չիվչյանին: Արդյունքում դրվել են Հիմնադրամի և ջավախահայ առանձին գործարարների միջև համագործակցության հիմքերը: Այդպիսի համագործակ ցության շրջանակներում սկսվել է կիրառվել Հիմնադրամի միջոցով նպատակային ծրագրեր իրականացնելու պրակտիկան:

On August 6, with the support of the Fund took place the opening of a pedestrian bridge over the Taparvan River, which connects the town of Akhlakalaki and the village of Khulgumo and other surrounding villages. On this occasion, a letter of appreciation was handed to the initiator and benefactor of the project Tumas Chivchyan. As a result, grounds of partnership were established between the Fund and individual entrepreneurs. Within the frameworks of this kind of cooperation purpose-oriented programs are already being implemented in practice by the Fund “Support to Javakhk”.

Գ. Դրամահավաքներ

2014 հոկտեմբերի 17-ին «Ջավախքին աջակցություն» հիմնադրամը Երևանում շուրջ 500 ջավախահայերի մասնակցությամբ կազմակերպել էր «Մեր անելիքները ջավախահայության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գործում» թեմայով համաժողով և բարեգործական համերգ-երեկո, որտեղ հյուրերին ներկայացվեց հիմնադրամի գործունեությունը, իսկ ավարտին տեղի ունեցավ ջավախահայության աջակցության հայաստանյան առաջին հանգանակությունը: Արդյունքում ՀՀ-ում հիմք դրվեց դրամահավաքների միջոցով Ջավախքում ծրագրեր իրականացնելու մշակույթին,

C. Fundraisings

On October 17, 2014, in Yerevan, the Fund “Support to Javakhk” with the participation of around 500 Javakhk Armenians organized a conference on the topic “Our tasks in solving social-economic problems of Javakhk Armenians” and a charity evening concert. During the event the guests had a chance to acquaint themselves with the projects and activities of the Fund, after which, toward the end, for the first time in Armenia took place a fundraising directed at assisting Armenians in Javakhk. As a result, in Armenia, a new culture of implementation of proj-

Հիմնադրամի մասին իրազեկվեցին առավել մեծ թվով քաղաքացիներ, ավելացավ Հիմնադրամի նվիրատուների, համագործակիցների և համակիրների քանակը:

ects aimed at assisting Javakhk Armenians through fundraising was created. Thus the number of donors, partners and supporters of the Fund increased substantially and the Fund received recognition from a bigger mass of people in general.

Նոյեմբերի 16-ին Սանկտ Պետերբուրգ քաղաքի «Ամրոց» ռեստորանային համալիրում շուրջ 200 անձի մասնակցությամբ տեղի ունեցավ «Ջավախքին աջակցություն» հիմնադրամի նախաձեռնած «Մեր անելիքները ջավախահայության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գործում» թեմայով քննարկումը և բարեգործական համերգ–երեկոն:

Միջոցառմանն ողջույնի խոսքով հանդես եկան Սանկտ Պետերբուրգի Սուրբ Կատարինե եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Սարգիս քահանա Չոփուրյանը, Սանկտ Պետերբուրգի հայկական ազգային մշակութային ինքնավարության նախագահ Կարեն Մկրտչյանը,

On November 16, 2014, in Saint Petersburg in the restaurant “Amrots”, the Fund “Support to Javakhk” with the participation of around 200 Javakhk Armenians organized a conference on the topic “Our tasks in solving social-economic problems of Javakhk Armenians” and a charity evening concert. In the event the pastor of the St. Catherine Church in Saint Petersburg Sargis Chopuryan, the president of Armenian National Cultural Self-government Karen Mkrtchyan, the president of the Board of Trustees of the Fund “Support to Javakhk”, benefactor Sos Sahakyan, the director of NAS RA History Institute, academician Ashot Melkonyan, the founder

«Ջավախքին աջակցություն» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, բարերար Սոս Սահակյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը, «Կարին» ավանդական երգի-պարի խմբի գեղարվեստական ղեկավար Գագիկ Գինոսյանը և այլք:

Միջոցառման ընթացքում հայտարարվեց ՌԴ-ի մի շարք հայաշատ քաղաքներում իրականացվելիք դրամահավաք-միջոցառումների, ինչպես նաև ՀՀ-ից դուրս Հիմնադրամի մասնաճյուղեր ստեղծելու մեկնարկի մասին, Ս. Պետերբուրգի գործարարները և հայկական համայնքը լայնորեն իրազեկվեցին Հիմնադրամի վերաբերյալ:

and director of "Karin" folk-dance group Gagik Ginosyan and others spoke with the words of greeting. During the event it was announced about the future fundraising affairs in other cities of RF populated by many Armenians. The opening of new branches of the Fund "Support to Javakhk" was also in the announcements. Entrepreneurs and the Armenian community of Saint Petersburg were widely informed about the Fund.

During the reporting period a new and frequently updated, official website was created (www.jah.am). There are introduced the problems of locality in all Javakhk regions, and interactive map showing all the implemented programs, which is regularly refreshed with different kind of information. The Fund also has its official Facebook

Հաշվետու ընթացքում ստեղծվել և հաճախակի թարմացվում է Հիմնադրամի պաշտոնական կայքէջը (www.jah.am), որտեղ ստեղծվել է նաև Ջավախքի բոլոր շրջանների բնակավայրերի հիմնախնդիրները, իրականացված ծրագրերն արտացոլող ինտերակտիվ քարտեզ, որը պարբերաբար համալրվում է տարբեր տիպի տեղեկություններով: Գործում է նաև Հիմնադրամի պաշտոնական ֆեյսբուքյան էջը (facebook.com/jah.fund), որը մեկ տարվա ընթացքում ունի 2.000-ից ավելի հետևորդ:

Հիմնադրամի և վերջինիս իրականացրած ծրագրերի մասին պարբերաբար անդրադարձել են ՀՀ-ի, Ջավախքի և սփյուռքի տպագիր, էլեկտրոնային, ռադիո և հեռուստատեսային լրատվամիջոցները: Առավել հիմնավոր է Հանրային հեռուստաընկերության հետ համագործակցությունը:

page (facebook.com/jah.fund), which has been liked for more than 2000 times over two years of operating.

The implemented projects and programs of the Fund were frequently referred to in RA, Javakhk and Diaspora press and internet media, radio and TV channels. The cooperation of the Fund with Public Television of Armenia is set even more strongly.

ԳԼԽԱՎՈՐ ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐ

$ 50,000 և ավել

Սոս Սահակյան

$ 30,000 և ավել

Արմեն Մկոյան

$ 10,000 և ավել

Արման Սահակյան

Արմեն Ղարսլյան

Պավլիկ Մարգարյան

Վաղարշակ Սարգսյան

$ 5,000 և ավել

Աղասի Սահակյան

Արարատ Մահտեսյան

«Իմպուլս» ՍՊԸ (Լրատվական ռադիո)

TOP DONORS

$ 50,000 and more

Sos Sahakyan

$ 30,000 and more

Armen Mkoyan

$ 10,000 and more

Arman Sahakyan

Armen Gharslyan

Pavlik Margaryan

Vagharshak Sargsyan

$ 5,000 and more

Aghasi Sahakyan

Ararat Mahtesyan

“Impulse” LLC (Information radio)

Կարեն Գոմցյան

Համլետ Շահբեկյան

Սամվել Աղեկյան

Սերգեյ Վանցյան

$ 1,000 և ավել

Ամատունի Տոնոյան

Արթուր Ղուլյան

Արսեն Լոքյան

Գրիգոր Տաշչյան

Զուրաբ Ծառուկյան

«ԷՅ-ԷՆ Աուդիտ» ՓԲԸ

Մաթևոս Հովսեփյան

Մերրիլլ Ֆերնանդո

Յուրա Հովհաննիսյան

Ռաֆայել Եղոյան

Karen Gomtsyan

Hamlet Shahbekyan

Samvel Aghekyan

Sergey Vantsyan

$ 1,000 and more

Amatuni Tonoyan

Artur Ghulyan

Arsen Loqyan

Grigor Tashchyan

Zurab Tsarukyan

«AN Audit” CJSC

Matevos Hovsepyan

Merrill J. Fernando

Yura Hovahannisyan

Rafayel Yeghoyan

Սամվել Բարսեղյան

Սերգեյ Լոքյան

Սպիրիդոն Բուռնուսուզյան

Վիկտոր Դանոյան

Վիկտոր Ղուլիկյան

ՋԱՀ-ի նվիրատուների ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ **www.jah.am** կայքում:

Դարձե՛ք ՋԱՀ-ակիր,
մասնակցե՛ք Ջավախքի շենացմանը:

Samvel Barsheghyan

Sergey Loqyan

Spiridon Burnusuzyan

Viktor Danoyan

Viktor Ghulikyan

The complete list of the Fund top donors is available on the website **www.jah.am**.

Be a "torch-bearer",
participate in the development process of Javakhk.